




Վերականգնվող էներգետիկայի ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրության նախապատրաստման և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի տվյալների շտեմարանի համար տվյալների հավաքագրման խորհրդատվական ծառայությունների մատուցում

Երկիր Հայաստանի Հանրապետություն
Քաղաք Երևան
Պատվիրատու «Էներգաինվեստ ԾԻԳ» ՊՀ
Ժամկետները 2005 թ
Համակատարողներ «Գեոնիսկ-ՀԸ» ՓԲԸ, «ՍոլարԷն» ՍՊԸ

Տեխնիկական առաջադրանք

1. Վերականգնվող էներգետիկայի (ՎԷՆ) ոլորտի պաշարագիտական տվյալների հավաքում և մուտքագրում ՀՀ - ՎԷՆ համակարգչային շտեմարան:
2. Լոռու մարզում ՎԷՆ ոլորտին վերաբերող դաշտային ուսումնասիրությունների կատարում:
3. Տվյալների փոխակերպում, Հայաստանի ՎԷՆ համակարգչային շտեմարանի և Լոռու մարզի ՎԷՆ ԱՏՀ-ի լրացում:

ID	Name	Height [m]	Capacity [cub.m]	Pressure [m]	Line Length [m]	Production [cub.m]	Prod. Unit	Consumption [cub.m]
1	Սևակ	1300	1130	1.50 Mpa	115 m	6.3 m³/hour	1.8 m³/h	
2	Շահախիթի ՀԷԿ	1034	1004	1.6 Mpa	58 m	6.3 m³/hour	2 m³/h	
3	Շահախիթի ՀԷԿ	1034	1004	1.5 Mpa	58 m	5.7 m³/hour	2 m³/h	
4	Սևակ ՀԷԿ	1025	990	0.70 Mpa	260 m	300 m³/hour	37 m³/h	
5	Սևակ ՀԷԿ	1300	1200	0.50 Mpa	80 m	1.22 m³/hour	0.8 m³/h	
6	Սևակ ՀԷԿ	1700	1600	0.50 Mpa	80 m	1.22 m³/hour	0.8 m³/h	
7	Սևակ ՀԷԿ	1975	1900	0.80 Mpa	70 m	3.73 m³/hour	2.8 m³/h	
8	Սևակ ՀԷԿ	1900	1825	1.47 Mpa	70 m	6.27 m³/hour	2.8 m³/h	



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ ՎԷՆ տվյալների բազայի լրացման համար հավաքագրվել են՝
 - Գետերի ջրաբանական բնութագրերը, ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգերի մանրակրկիտ տվյալները:
 - Գործող էլեկտրակայանների տվյալները:
 - Էլեկտրամատակարարման համակարգերի տվյալները:
 - Քամու, արևային էներգիայի, կենսագազի և գեոթերմալ էներգիայի տվյալները:
 - Բնակավայրերի և բնակչության դեմոգրաֆիկ տվյալները:
 - Քաղաքաշինական ենթակառուցվածքների տվյալները:
 - Բնապահպանական և իրավական ոլորտներում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատումները:
- ✓ Դաշտային գործիքային ուսումնասիրությունների ընթացքում Լոռու մարզում իրականացվել են՝
 - Հիմնական գետավազաններում գետերի հունների փոփոխությունների գրանցում:
 - Ջրատնտեսական համակարգերի ուրվագծերի ճշգրտում, ջրաղբյուրների և ջրառի կետերի կոորդինատների որոշում:
 - Մարզում գործող և կառուցվող միկրո ՀԷԿ-երի վերաբերյալ տվյալների ճշգրտում:
 - Մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի գնահատում և հեռանկարային ՀԷԿ-երի սխեմայի առաջարկում:
- ✓ Կատարվել է հավաքված, վերլուծված, դասակարգված տվյալների մշակում, փոխակերպում և Հայաստանի ՎԷՆ համակարգչային շտեմարան ներմուծում, ինչպես նաև, Լոռու մարզի ՎԷՆ աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ) մուտքագրում և լրացում:

Աշխատանքի նպատակն է

Հայաստանի ՎԷՆ համակարգչային շտեմարանի և Լոռու մարզի ԱՏՀ զարգացում, Լոռու մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի գնահատում և ՎԷՆ ոլորտի զարգացման նկատմամբ բիզնեսի հետաքրքրության բարձրացում:

